

ՀՀ Ֆինանսների նախարարություն

Հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողով

Ո Ր Ո Շ ՈՒ Մ 5/6

9 փետրվարի 2016 թ.

Քննարկվեց «Կարեքս» ՍՊԸ տնօրեն Վ.Գևորգյանի գանգատը ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 05.12.2015 թ-ի թիվ 307222/02 որոշման դեմ:

«Կարեքս» ՍՊԸ տնօրենի գանգատում բերված փաստարկները.

21.12.2015թ-ին ստացել եմ ՀՀ ՖՆ ԻՎ պետի կողմից 05.12.2015թ-ին կայացված վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 307222/02 Որոշումը, որով կայացվել է վարչական պատասխանատվության ենթարկելու 20.000 ՀՀ դրամով տուգանելու որոշում:

Որոշման հետ գանգատաբերը համաձայն չէ հետևյալ պատճառներով.

Նախ որոշման հիմքում դրվել է 05.12.2015թ-ին կազմված ինչ-որ արձանագրություն, որը գանգատաբերը չի ստացել, որի կազմմանը չի մասնակցել և այն ակնհայտորեն կազմվել է օրենքի պահանջների խախտմամբ: Այս մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ վարչական որոշման մեջ նշված չէ արձանագրության համարը: Մինչդեռ ակնհայտ է, որ վարչական իրավախախտման գործով կազմված և որևէ արձանագրություն չի կարող չհամարակալվել, չունենալ հերթական համար: Տվյալ դեպքում անհայտ է մնում թե 05.12.15թ-ին կազմված որ արձանագրության քննության արդյունքում է որոշվել ենթարկել վարչական պատասխանատվության:

Մյուս կողմից, եթե տվյալ արձանագրությունը կազմվել է 02.12.2015թ. ուղարկված ծանուցմամբ նշված 05.12.2015թ. ժամը 11.00-ին (իրավիքվել է ՀՀ ՖՆ Իրավաբանական վարչության 2-րդ բաժին օրենքով սահմանված ժամկետում հարկերը չմուծելու համար վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրության կազմման գործընթացին և գործի քննությանը մասնակցելու, ինչպես նաև բացատրություններ և առարկություններ ներկայացնելու համար) կայացված գործի քննության ընթացքում ենթադրաբար կազմված արձանագրությանը, ապա պետք է նշել, որ նշված գործի շրջանակներում ևս ներկայացվել են համապատասխան բացատրություններ, ինչպես վարույթն իրականացնող ՀՀ ՖՆ ԻՎ 2-րդ բաժնի աշխատակցին, այնպես էլ ՀՀ ՖՆ ԻՎ պետին: Գանգատաբերը ներկայացրել է հիմնավորումներ այն մասին, որ տվյալ պարագայում վարչական տուգանքի նշանակման որոշման կայացումը կլինի սխալ և խնդրել է կարճել վարչական գործը: Մինչդեռ փաստացի չեն քննվել և հաշվի չեն առնվել իր կողմից ներկայացված բացատրությունները, առարկություններն ու հիմնավորումները, իրականացվել է ակնհայտորեն ձևական վարչական վարույթ, որի արդյունքում ընդունվել է վերը նշված ոչ իրավաչափ վարչական ակտը:

Այս ամենի արդյունքում, Գանգատաբերը ստիպված է վերադասության կարգով բողոքարկել իր նկատմամբ կայացված ոչ իրավաչափ վարչական ակտը:

Այսպես, վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 170.3 հոդվածով սահմանված պատասխանատվությունը վերաբերվում է հարկերը

սահմանված ժամկետից ուշ վճարելու դեպքերին, սակայն ակնհայտորեն նպատակ է հետապնդում հարկերի վճարումից սխտեմատիկորեն խուսափելու կամ պարբերաբար դրանց վճարումն ուշացնելու դեպքերի կրկնությունն կանխելուն:

Ընկերության դեպքում հարկային վճարումների պատմության ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ ընկերությունը նախկինում երբևէ ոչ միայն չի ուշացրել հարկերի վճարումը, այլև ունի հարկային գերավճարներ: Մասնավորապես, 02.12.2015թ. դրությամբ ընկերությունն արդեն իսկ ուներ ավելի քան 1.6 միլիոն դրամի հարկային գերավճար: Ընդ որում, ըստ հարկային մարմնի, իրական գերավճարներ: Ակնհայտ է, որ ընկերությունը, որը խուսափում է հարկային պարտավորությունները կատարումից կամ միտում ունի կատարելու դրանք ուշացումով, չի կարող ունենալ այդպիսի գերավճարներ:

Պետք է նշել նաև, որ նման գումարի պարտավորություն ըստ էության առկա չի եղել, քանի որ ցանկացած պահի հարկային մարմինն այն կարող էր հաշվանցել առկա գերավճարներից և կամ դա կարող էր կատարվել ընկերության դիմումի հիման վրա: Ավելին, տրամաբանական կլիներ, եթե ամսեկան մի քանի անգամ վճարումների կատարման խնդրանքով ընկերության տնօրենին հեռախոսազանգով դիմող հարկային տեսուչները այդ անգամներից մեկում տեղեկացնել առկա պարտավորության մասին և առաջարկել կամ վճարել այն կամ դիմել գերավճարներից հաշվանցման:

Մյուս կողմից հենց այն պահին, երբ ստացվել է վարչական վարույթին մասնակցելու վերաբերյալ ծանուցումը, ծանուցմամբ նշված ժամկետից ուշ կատարված պարտավորության գումարն ամբողջությամբ արդեն իսկ վճարված է եղել և այն ակնհայտորեն եղել է մեխանիկական սխալի հետևանք ու վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքի տեսանկյունից ունեցել է ակնհայտ նվազ նշանակություն: Կարևոր է նաև նշել, որ տեղի ունեցածն առաջին և միակ դեպքն է ընկերության գործունեության ընթացքում: Այսպիսի պայմաններում անտեսվել են այս ամբողջ օբյեկտիվ հանգամանքները և անգամ չբավարարվելով բանավոր դիտողությամբ կայացվել է վարչական տուգանքի նշանակման մասին որոշում:

Հաշվի առնելով ամբողջ վերը գրվածը՝ գանգատաբերը խնդրում է անվավեր ճանաչել վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 307222/02 որոշումը:

«Ֆինանսների նախարարության հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովի եզրակացությունը».

«ՖՆ հարկային և մաքսային մարմինների գանգատարկման հանձնաժողովը (այսուհետ նաև Հանձնաժողով), ուսումնասիրելով սույն գործին առնչվող նյութերն ու ապացույցները եկավ հետևյալ եզրակացության:

Քննարկման ընթացքում նշվեց, որ «ՖՆ իրավաբանական վարչության պետը, քննելով 05.12.2015թ-ի վարչական իրավախախտման վերաբերյալ թիվ 2750 արձանագրությունը և կից նյութերը պարզել է, որ «Կարեքս» ՍՊԸ տնօրեն Վարդան Գևորգյանը օրենքով սահմանված ժամկետում չի կատարել հարկային պարտավորությունները:

Նկատի ունենալով, որ արարքը նախատեսված է «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» ՀՀ օրենսգրքի 170.3-րդ հոդվածով, ուստի ղեկավարվելով նույն օրենսգրքի 32-րդ հոդվածի 2-րդ մասով, 244.2-րդ, 281-րդ հոդվածներով և 282-րդ հոդվածի 1-ին կետով ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության

պետի կողմից 05.12.2015 թ-ին ընդունվել է թիվ 307222/02 որոշումը (այսուհետ նաև Որոշում) Վարդան Գևորգյանի նկատմամբ վարչական տույժ նշանակելու մասին՝ գումարով 20.000 դրամի չափով:

Քննարկման ընթացքում պարզվեց, որ Որոշումը կայացվելու համար հիմք է հանդիսացել 25.11.2015 թ-ի դրությամբ «Հարկատու 3» համակարգում «Կարեքս» ՍՊԸ-ի վերաբերյալ առկա տվյալները: Մասնավորապես, 25.11.2015 թ-ի դրությամբ ընկերության ԱԱՀ-ի գծով պարտավորությունը կազմել է ընդամենը 106.459 դրամ, այդ թվում՝ ապառք 102.094 դրամ, տույժ 4.365 դրամ: Սակայն հարկ է նշել նաև, որ 25.11.2015 թ-ի դրությամբ շահութահարկի և եկամտային հարկի գծով ընկերությունը ունեցել է ընդամենը 1.555.592 դրամի չափով իրական գերավճար: Ընդ որում, արդեն իսկ հաջորդ օրը՝ 26.11.2015 թ-ին, ընկերության կողմից վճարվել է 105.000 դրամ, իսկ 04.12.2015 թ-ին՝ 1612 դրամ, որի արդյունքում ամբողջությամբ մարվել է ԱԱՀ-ի գծով վերոգրյալ պարտավորությունը: Այսինքն, 05.12.2015 թ-ի դրությամբ ընկերությունն որևէ հարկատեսակի գծով պարտավորություն չի ունեցել:

Քննարկվող դեպքում վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը, ինչպես նաև վարչական իրավախախտման գործի վերաբերյալ թիվ 307222/02 որոշումը կայացվել են 05.12.2015 թ-ին, երբ ընկերության կողմից ամբողջությամբ կատարված է եղել վարչական պատասխանատվության ենթարկելու համար հիմք հանդիսացած ԱԱՀ-ի գծով 106.459 դրամի չափով պարտավորությունը:

Ելնելով վերոգրյալ փաստական հանգամանքներից՝ Հանձնաժողովը գտնում է, որ գանգատը ենթակա է բավարարման:

Ելնելով քննարկման արդյունքներից և ղեկավարվելով «Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 43.1-րդ հոդվածի և «Մաքսային ծառայության մասին» ՀՀ օրենքի 37-րդ հոդվածի պահանջներով հանձնաժողովը

ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

Բեկանել ՀՀ ՖՆ իրավաբանական վարչության պետի 05.12.2015 թ-ի թիվ 307222/02 որոշումը, իսկ գործը՝ կարճել:

Հանձնաժողովի նախագահ՝



Վ.ՄԻՐՈՒՄՅԱՆ